

ՏԵՕՐԵՆԸ - ԽՐԴԱՍԿԱՐԵՂՈՒՄ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՔԱՎՍԵՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԻՆՆԸ	500 ՂՐԸ
ՆԵՍԱՄՍԵԱՑ	250 »
ԵՌԱՄՍԵԱՑ	150 »

Բաժանորդագրությունը կ'սկսվի ամեն ամսոյ 1 ին և 15 ին



Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MANOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

100 ՓԱՐԱ

ԽՐԱԽՈՒՍԻՉ ՅՈՅՍԵՐ

Այս անգամ լուրը բարձրէն կուգայ Համաձայնական տէրութեանց գլխաւոր ու պատկառելի պետերէն մին՝ Լոյս Ճօրձ կ'բարբառի. Հայաստանի յանձնառութիւնն անդիլորէն Մ.-Նահանգաց ստանձնելը ծանուցանելով, անգլիական խորհրդարանին բնմէն:

Հուրը ոչ միայն խրախուսիչ և սփոփարար է այլ նաեւ յուսալից նմանութիւն պատկերներն ներշնչող լուր մը ցայսօր չէինք տեսած որ և է կերպով հասած հեռագիրներն ու լուրերը, միշտ զիրար կ'հակասէին և յոյսերու և յուսախաբութիւններու մէջ կ'տարուբերէին խեղճ հայութիւնը:

Սակայն այժմ խնդիրը բոլորովին տարբեր կերպարանք մը կ'ստանայ, որովհետեւ հեղինակաւոր ձայն մըն է բարձրացողը, որ պաշտօնական բնմէ մը ի յոր աշխարհի կ'ծանուցանէ թէ Ամերիկայի յանձնառութիւնն անխուսափելի է Հայաստանի համար:

Մ.-Նահանգաց ազգային նախագահն, ինչպէս կ'երեւի, այլեւս աւելորդ համարած է ամերիկեան քօնկրէյն որոշման սպասել և նախաձեռնութիւնն ստանձնած է, վստահ իր յաջողութեան վրայ, հարկ եղած քայլերն առնելու:

Զօր. Հարբլտ, զօր. Բէրլինկի սպայակոյտի պետը, արդէն հրաման ստացած է ուղղակի գէպի Հայաստան ուղեւորելու և ոչ թէ կովկաս ու Արեւմտ, ինչպէս ուղեւորած է գնդ. Հէսթը, որով անգամ մըն ալ կ'հաստատուի մեր առջի վայրկեանէն բրած գուշակութիւնն թէ գնդապետին պաշտօնը բոլորովին տարբեր հանգամանք ունի և քաղաքական ըլլալէ շատ հետի է:

Զօր. Հարբլտ ուրեմն Պօլսոյ ճամբով և իր հետ մասնապէսներ ունենալով պիտի ուղեւորի Հայաստան և նկատելով որ Լոյս Ճօրձի յայտարարութիւնն համեմատ, յանձնառութիւնն պիտի ստանձնեն Մ.-Նահանգներն, զօրավարը կ'երթայ տեղւոյն վրայ մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը ընելու և գինուրականապէս հարկ եղած տեղեկագիրն պ'արտատնուի:

Գնդ. Հէսթէլը անուամբն աս թիւ, կարգ մը միամիտներ յատալ գացին, շինծու և մտացօժին հեռագիրներու կամ թերթերէ հաղորդուած լուրերու վրայ հիմնուելով, թէ՛ ամերիկեան կառավար ըլլելու մեծաքանակ սպանմամբերը և զրամ արամպարած է Հայաստանի համար, և թէ գնդապետը իր հետ միասին կ'տանի՝ այդ տեղն իրեն տրոջմաթօր գործելու համար:

Տիգրթօրական այդ անհաւատալի լուրը մարտողներ գտնուեցան, որքան ալ անմարտելի ըլլար տրամաբանութիւն, և նոյնիսկ բան մը բուած ըլլալու արտաքին բանուած հեղինակներով ու արհամարհանքով վերաբերուեցան մեր յայտնած կարծիքներուն գէմ կարեւորութիւն չառնելը, որովհետեւ անարժէք էին անոնք և սպասեցինք որ դէպքերն պայնն ապացուցանել, թէ մենք սխալած չէինք մեր տեսութեանց մէջ, և առաջի վայրկեանէն արդէն շատ պարզ էր խնդիրը, քանի որ գնդ. Հէսթը կովկասի մէջ պաշտօն մը ունէր ի գործ գնեկը և նախ և առաջ կ'ուղեւորէր Քիթիլի և ապա Երեւան, ուրեմն պարեհաւորութիւն և ամերիկեան նպատակաւորաց ու կարմիր խաչերու վեպին տնօրինութեան պաշտօններն էին որ իրեն վստահած էին, որով աւելի քաղաքին քան քաղաքական էր գնդապետին պաշտօնը:

Իսկ բուն քաղաքական պաշտօնն ահա կ'յանձնուի և պաշտօնապէս կ'յանձնուի Ջօր. Հէրբլտի, որու անուամբն առաջ կամ քիչ յետոյ Լոյս Ճօրձ յանձնի խորհրդարանին կ'յայտարարէ մեզի համար ակնդէտ սպասուած այդ գեղեցիկ ու խրախուսիչ լուրը:

Տարակոյս չկայ թէ՛ զօր. Հարբլտի պահանջներուն գոհացում տալ պիտի փութայ Մր. Ուիլսոն Հայաստան զրկելով զօրք ու սպանմամբերը սպանուելու համար անպորտութիւնը:

Ամերիկա՞ գործնական ժողովուրդ, մանաւանդ այս համաշխարհային պատերազմին մէջ գործնականապէս ցոյց տուած իր անստանալի վճռականութիւնն և արագութիւնն զինուորական առաքումներու և այլազան հարցերու մէջ, զօրավարին պահանջումն ունեւ փութով գոհացում տալու պիտի ջանայ, որպէսզի ձմեռուան խառնաշուռք եղանակին հասնելէն առաջ, գէթ մասամբ յաջողին իրենց օժանդներն վերադարձնել հայ գաղթականներն ու տարագիրները:

Զօր. Հարբլտի Հայաստան ուղեւորին ճիշտ ժամանակին տեղի կ'ունենայ, երբ թուրքերն ազգայնական կուսակցութեան անունին տակ, սկսած են սպառնալիք մը գառնալ Հայոց գլխուն և երբ միւս կողմէ՛ թուրքերն կ'ջանան Քիւրտերով և իսլամ տարբեր ցեղերով լեցնել հայկական գաւառները:

Ամեն պարագայի տակ Ամերիկա օգնութեան կ'հասնի Հայոց ճիշտ վայրկեանին, ամենափափուկ ու կենսական բողբոջներու մէջ և կասկած չկայ թէ՛ զօր. Հէրբլտի անուամբն լուրը և Լոյս Ճօրձի յայտարարութիւններն կարծուածէն աւելի ազգայնական պիտի ըլլան թուրք քաղաքական շրջանակներու վրայ, որոնք պահ մը կարծեցին թէ՛ Հայերն գարծեալ անպաշտպան մնացած են և իրենց արեւմտային արտաքիններուն պատրաստ որսեր:

Այդ երկու կարեւոր հեռագիրներն ահա կուգան վերիվայր շրջի անոնց ծրագրիներն և բանի ոյժի մը ի գործ գրած զօրիչ ազգայնութիւնն ունենալ:

Հայերն կրնան այժմ քիչ մը ազատ շունչ առնել և յուսալ մտաւոր լուսազօրն օրերու ծագումին:

Հ. Մ.

ՔԱՐՈՉԻՆ ԴԵՐԸ

Վայելքներ կան որոնք մարմնական և նրութեան բազմաքանակ ծնունդ ըլլալով, լոկ վաղանցուկ տպաւորութիւն մը կը թողուն մեր վրայ:

Կան նաեւ մտաւորական վայելքներ որոնք իր արդիւնք մարդկային իմացական ու ստեղծագործ կարողութիւններուն միտքերը ազնուացնելու և կատարելագործելու կը ձգտին:

Բայց հոգեկան վայելքը վստահողին է բոլոր միւս վայելքներուն, որոցմէ մին ընթացիկութիւն բարեպաշտեհ առիթը ունեցած անցեալ կիրակի Ս. Ստեփանոսի տաճարին մէջ:

Ճիշդ Քրիստոսի նման, երբ լեռան քարոզին մէջ իր երանութիւնները կուտար մարդկութեան, Առաջ. Տեղապահ Տ. Յովհան Մ. Վ. խոր լուսութեան մէջ իր «Աստուած սէր»ն կը հնչեցընէր:

Որքան բացարձակ բայց տնտեսւած ճշմարտութիւն մը կը պարունակէ սա խօսքը իր մէջ «Ո՛չ միայն հացով կ'սպարի մարդ, հարցո ան ամեն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ի՞նչ է եկեղեցին, չէ որ Աստուծոյ տունն է ան, կամ Անոր գլխոցը: Եկեղեցու շինողները ինք Քրիստոս էր, և չէ՞ որ էր կեանքն ալ քարոզչութիւններու շղթայում մը եղաւ Չէ՞ որ Հայաստանեաց եկեղեցու հիմնադրիչներն ալ քարոզը կը համարէին ամենակենսական մտքը ժամերկութեան:

Ճշմարտէն թէ եկեղեցու ամեն արարողութիւնները, ընթացումները, նա մանաւանդ ներգաղնակ երգեցողութիւնները, իրենց մասնաւոր դերը ունին քրիստոսական հոգիին վրայ ազդելու տեսակետով, սակայն քարոզն է որ իւրաքանչիւր անհատի սրտին մէջ պիտի ներարկէ քրիստոնէական հաւատքի սկզբունքները, զանոնք կիրարկելու միջոցները, Ս. Գրոց բացատրութեամբ և մեկնութեամբ է որ մեր պարտականութեանց գիտակցութիւնը պիտի ունենանք:

Աստուածորդւոյն ստեղծ յղեցող խօսքերէն մէկն էր. «Գրացէ՛ք և քարոզեցէ՛ք աւետարանը բոլոր ազգերուն»:

Ահաւասակ Ամերիկան, այսօր չիկայ քաղաք մը, գիւղ մը, աննշան աւան մը ուր եկեղեցին իր քարոզչը չունենայ: Հին կը խնուին ժողովուրդը, շինականը և քաղաքացին, տգէտը և գիտունը, սրախալի միլիթարութեան նշոյլ մը, Աստուածային սիրոյ, անբու անձնութեան և ներգործութեան ջոշափելի ապացոյցները տանին իրենց հետ գէպի չուկայ, բնտանի յարկը գէպի կեանք:

Ինչո՞ւ հայն ալ չունենայ իր քարոզչները: Ինչո՞ւ մեր քահանաներն և վարդապետները, որոնք յաճախ և զժողովարար բացարձակութեան անպէտ են իրենց կոչումին վստահութեանը, միեւնոյն ժամանակ քարոզչներ չըլլային Յիւրաքի, հունձքը տուաւ է բայց մշակները քիչ:

Ամենալուրջ նկատաւորան արժանի պակաս մըն է սա, որ թերեւս ներկայ քաղաք և ազգային փափուկ վայրկեաններուն շատերու համար երկրորդական կամ երրորդական պահանջ մը կը թուի ըլլալ:

բողիչ Հայր սուրբին սա խօսքը թէ ներկայ երիտասարդութիւնը՝ որ քաղաքական, գրական, գիտական և նորածնութեան վերաբերեալ խնդիրներուն վրայ կը խօսի, կը վիճի, կը ճամարտակէ խելոյնորէն, առթ կը համարի իրեն Քրիստոսի անունը բերան տանել:

Այսօր հրապարակին վրայ բազմաթիւ թերթեր կան, որոնք լի են քաղաքական բազմազան լուրերով, կուսակցական և ստեղծ գյուտով է ըսել անձնական անարկի և գծուծ հաշիւներով ու բանավէճերով:

Սակայն ունի՞նք կրօնական լուրջ թերթեր կամ հանդէսներ:

Մտէ՛ք ազգային գլխոցներու սեմին ներս, քննեցէ՛ք ծրագրիները և պիտի տեսնաք թէ կրօնի ուսումը որքան անկարեւոր և երկրորդական տեղ մը գրաւած է հոն կրօնի այն դասը որ կ'ուսանողն իր աւելի ազգային կրօնի պատմութիւն է՝ քան Ս. Գրքին ուսումը: Արդարեւ անուրանալի է ազգային կրօնի կարեւորութիւնը, բայց միևնոյն ժամանակ անհրաժեշտ պէտք մըն է զուտ կրօնի աւանդութիւնը հմուտ մասնապէսներու կողմէ՛ կատարեալ ուղղորդութեամբ և հարկ եղած կարեւորութեամբ:

Ինչո՞ւ հայերն ալ չունենան Արեւմտային Քրիստոնէական ընկերակցութիւններ՝ թէ՛ արանց և թէ՛ կանոնաց համար, զոնէ անոնք որ բարեբաղդութիւնը ունեցած են անգամակցելու այսօրինակ ընկերակցութեան մը, կ'զգան այն հոգեկան վայելքները և օգուտները զոր քաղած են իրենք:

Հայ պատանիներ և օրիորդներ, երբ սոխակին գայլայլիկը, լուսնին ազատ նշուլները, ծագիկին փթթումը և կեանքի յոյսերը և յոյզերը մէջմէկ ներշնչարան կ'ըլլան ձեզ քերթելու և բանահիւսելու, ինչո՞ւ չէք մտածեր փառաբանել և գովել Ան՝ որ Գեղեցիկն ու Բարին ձեզ պարգեւեց, և որ գանոնք գնահատելու գերագանց կարողութիւնն այլ գրաւ ձեր մէջ:

Բայց այս մասին գուք չէք յանցաւորը, այլ անոնք որոնց պարագն էր ժամանակին քրիստոնէական ոգիով դաստիարակել զձեզ:

Սիրելի է մեզ յուսալ որ պիտի գայ որ մը երբ հայ երկսեռ երիտասարդութիւնը գիտակցութիւնը պիտի ունենայ իր բարոյական պարտականութեանց և բուռն տեղնով մը պիտի փութայ նո ի ուելու իր կոչումին, այն է վերածել Հայաստանի և աշխարհը գրախալ մը և Աստուծոյ թագաւորութեան:

Թող անհնանք սեփական մեր կառավարութիւնը, այն ժամանակ առիթներ չպիտի պակսին մեր յոյսերը և երազները իրագործելու:

Մ. ԱՆԱՀԻՏ Կ. ՆԱԽԱՍՈՐԳ
Հ Ե Լ Վ Ե Ց Ի Ս
ՀՐԳԵՂԻ ԶՈՒԻՑԵՐԻԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցէ՝ 1861
Ամերիկայի հասցեւոր վրաստաց և նպաստաւոր պայմաններ
Ընդ. Երեւան-Յիւրաքի Կոլեջ
ԱԻԵՏԻՔԵԱՆ ԵՂԱՐ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՔԸ

Անցեալ հինգ շաբաթի իրիկուն, 20-ր- թօնքը Հարստեանի Միութեան կողմէն...

Անհատներն ու սպիւսկները, ըստ բնա- կան և ընկերային երեւոյթներու կամ...

Գրականութիւնը, ըստ աւան- զապահան է մեր նախնեաց սրտերը...

Այս բազմաթիւ ժը ընկելով բնաստանային կենցաղի և իմաստասի- րական կամ գրական կեանքի միջև...

Յարգելի աստիճանը, անցնելով հայ գրականութեան դերին ներհնչու- մի անսպառ աղբիւր մը յայտարարեց...

Օտար և հայ հողերաններու խըղ- ճամբիս ուսումնասիրութեան գրողը...

Օկտ. 20

ԲԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՐԻԿԱՆ յանձնախումբը, իր քննութեան ընթացքին, հանդիպած է...

Թիֆլիսէն կը հեռագրեն թէ, յայտնի չարագարար և կովկասեան...

Կովկասի ամերիկեան կարմիր-Պու- չի անդամներէն միոյն յայտարարու-

տեղեկացնէ թէ, Մարտիս կօրքի, որ Բեդրոսեանի սովիթական խորհուրդի...

ԹԷՍՏՕՐՈՍ ՖՈՒԹԲՈՒՍԷՏՈՒ, որ ԱՄՆ- րիկեան նորաստանաւոր յանձնախումբ- րին կողմէ Գործակալութեան գրական էր...

Տեղական Լուրեր

ՊԱՐԿԱՍՏԱՆԻ Շահին պաշտօնե- րու և Փորթ-Ասիոյ լիազօր պատուի- րակը, Միլիթար Ալի Ախպար խան Պահ- ման, առջի օր «Բաթրիս» նաւով քա-

ԵՐԷԿԻ առաւօտ հելէն բարձր-գոմի- տէր Պ. Սթէրիտաէս փոխադարձ այցե- լութեան գնաց Ախպար խան Պահմանի...

Պ. ՀԱՆՐԻ ՍԻՄԵՆՍԻ տեղւոյ օսմ. դրամատան նոր սնորհներ, երեքշա- րթի օր քաղաք հասած է, վարիւու համար...

Պ. ՄԱՎՐՈՒՏՍ, «Ավերօֆ» ի նրա- մանաստրը, Ֆրանսայի հիւպատոս Պ. Օսմէն-Լարբոզի, երեկ այցելութիւն տուած է...

ՆԻՐՔԻՆ գործ. նախարարութիւնը, Իզմիրի կուսակալութեան կ'իմացնէ թէ, ըզլոր Աւստրո-Ֆերման հպատակ- ները...

ԱՆԳՂԻՍԹԻ զօրավար Անտիբարն, առաջի օր զօրավար Նիտերի հետ եր- կարորէն խորհրդակցած է, ներքին գաւառներու ապահովութեան համար...

ԼՍԱՐԱՆ

Առաջնորդ, Տեղապահ Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան կղած հրա-ւերի մը համաձայն պիտի բանաստեղծ վազը...

ՀՐԱԻԷՐ

«ՁԻՐԹԵՒ» լրտնի. միութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր երկսեռ անդամները վազը կիր. ժամը 3ին (կ.ե.) Հռիփսիմեան սրահին մէջ...

ՆՈՐ ԿԱՐԳ-ԱՒԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Պարագրութիւնը քանակութեամ իր ընթացքներու համակութիւնէն, և գոնացում տարւ համար օրուան պահանջներուն, հակասակ նորանոր զոն- ղութիւններ ընել ստեղծելուն, որչաժ է յառաջիկայ կիրակիէ սկսեալ Ա. Մամուլը հրատարակել 4 էջերով:

Տարակիս չունի թէ ընթացող հասարակութիւնն այս մեր նոր զոն- ղութիւնն նկատի պիտի առնէ և իր համակիր վերաբերումով պիտի քաջա- լերէ գմեղ մեր նոր ձեռնարկին մէջ:

Այս նոր կարգադրութեամբ Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր մինչև ա- սուտ. յանկարծական օրէէ հրատարակական խնդրանքներու ի վիճակի ըլ- լալով զոնացում տար:

ԵՐԷԿ ԵՐԵՎՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 22 Օգոստոս 1919

Բէվալի (Պալիկի վրայ) կուսակալութիւնը որ վերջերս կազմուեցաւ, 12 անդամներէ կը բաղկանայ:

— Նախարարաց խորհուրդը երէկ թէ աւտու և թէ իրիկուն գումարուե- ցաւ, վիճարանութեան ենթարկելու համար Ջորալար Միլիթի կողմէ Բ. Դուռ տրուած ծանուցագիրը:

— Համաձայնական յանձնախումբը յետ 17րդ զօրքանակի նախորդ զօ- րավար Նատիր փոխան:

— Բարիզէ կը հեռագրեն թէ Թուրքիոյ ճակատագրին որոշումը, սերտօ- րէն կապուած է Պոլսոյ յանձնառութեան հարցին հետ:

— Հսումէ հասած հեռագրիներ կը տեղեկացնեն թէ, խորհրդարանին մէջ ընդհանուր ներումի ջուլտրուած օրէնքը ներկայացուցուած է Թագաւորին հաւանութեան:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON Փոխակի. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Իրենց մանրամասնութեանց համար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ Լ.ՆԻ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 23 Օգոստոս 1919

Պոլիս հասած են 18 ֆրանսայի պաշտօնեաներ որոնց պաշտօնն պիտի ըլլայ մաքսատան մէջ հակել, որպէսզի զեղծուներ չպատահին:

Պատերազմի ընթացքին Անգլիա ունեցած է 8,651,461 զօրք ասոնցմէ 616,832 մեռած են, 2,405,050 վիրաստոր և 766,568 զերի ու կորսուած են:

Լեհ բանակները սուրբ-Ստանիսլասի վրայ կ'յառաջանան և Վիլնա նան գրուած են:

— Բրիտանիոյ ծովակալութիւնը պաշտօնական զեկայցով մը կ'հարգորդէ թէ՛ ամառը 18 ին նաւային պաշար մը տեղի ունեցած է անգլիական նուաբաթիին մը և պոլշէ-վիք նաւատորմին միջև Ֆիլանտիոյ ծովածոցին մէջ: Ռուսերը կորսնցուցած են 2 զրահաւոր, 2 փոխադրանաւ և 1 թորփիլահալած, իսկ ու- նեցած են 3 փոքր ծովեղբիւրայ զրահապատներու կորուստ:

— Պուլիարիոյ մէջ լուսնութիւններն ծայր տուած են, սակայն կառա- վարութիւնը զսպել յաշտած է:

— Հայտութեան համաժողովը վերին Սեկիլոյ մէջ գործադուի տեղի տուող գերման էնթրիկները քննելով, հաւակական կ'նկատուի Սեկիլոյ Հա- մաձայնակներէ գրուումը:

— Պուլիարիոյ Տպարանի վրայ իր պահանջումներէն հրաժարած է:

— Մր. Ուիլսոն խնդրակցութիւն մը ունեցած է Սպիտակ Տան մէջ, ուր ցոյց տուած է պահանջկոտ հաշտութեան դաշնագրին փութով վաւերացնելու ամերիկեան Մերակոյտէն: Նախագահը լուսարանութիւններ ըրած է սպիտակ դաշնակցութեան մասին անոր զուտ բարոյական նկարագրին բացատրելով: Մր. Ուիլսոն յայտարարած է միայնքամայն որ կոշտ յարձայնումի մը պարագային Մ. Նախագահներն բարոյապէս պարտախնդրութիւն մը պիտի ունենան միջաման- լու: Ընդհանուր կարծիքն այն է որ դաշնագրին վիճարանութիւնը գրեթէ լրացած է:

— Ռուսական գիմիլով Հուլիս-Էթեան Համաժողովին պահանջած է որ Ար- շիպուքս Թոքէթը պաշտօնանկ ըլլալով, ազատական կուսակալութիւնը պաշտօնի կորսի:

— Պոլսոյ մէջ կազմուած գաղտնի ընկերութեան զեղծուներն քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը իր քննութիւններն յառաջ կը տանի, և հե- տըզետէ կրեան կ'ընէ թէ պատուաւոր ի վաճառականներ ևս խառնուած են այդ կազմակերպիչ շեղծուներուն:

— Պաթումէ կարտ և Արտանիէ Պոլիս հանող պատուիրակներ իրենց Թուրքիոյ կցուելը պահանջած են Ամերիկեան յանձնախումբին:

— «Ռաւիլը Էֆրեար» կը գրէ թէ՛ Ամերիկեան քննիչ յանձնախումբին յայտարարութեանց համաձայն Թուրքիոյ ապսպան փայլուն կ'իւրևի: